

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ
ԱՅԲԲԵՆԱՐԱՆ
ՅԵՎ,
ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ԱԴՐԲԵԶԱՆԱԿԱՆ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1939

31 JAN 2018

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ
ԱՅԲԲԵՆԱՐԱՆ
ՅԵՎ
ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ՌՈՒՍԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՅԵՐՐՈՐԴ ՅԵՎ ԱԴԻԲԵՋԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ
ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

Կազմեցին՝ Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Վ. ՈՐԴՈՅԱՆ

ՅԵՐՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Ե ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏԻ ԿՈՂՄԻՏԵ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1939

А. АЙРАПЕТЯН, В. ОРДОЯН
 БУКВАРЬ И КНИГА ДЛЯ ЧТЕНИЯ
 АРМЯНСКОГО ЯЗЫКА
 Для III кл. русск. школ
 и для V кл. азербайдж.

ШКОЛ

Гиз Арм, ССР, Ереван, 1939




11-28404 91


ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿ

	Եջ
Այբբենարան	3
1. Լենինի հետ—Թարգմ. ուսանողներից	47
2. Ընկեր Ստալինի պատանեկությունը—Պ. Քապանաձե	49
3. Ընկեր Ստալինը և Մամլաքաթը—Թարգմ. ուսանողներից	50
4. Մարիա Դեմչենկոն ընկեր Ստալինի մոտ—Թարգմ. ուսանողներից	51
5. Անհաղթ բանակը—Հ. Հայրապետյան	53
6. Հայրենասերը—Թարգմ. ուսանողներից	52
6. Շչակի յերգը—Հ. Հայրապետյան	57
8. Յերկու կոլտնտեսական—Թարգմ. ուսանողներից	58
6. Պիոներ Պավլիկ Մորոզովը—Թարգմ. ուսանողներից	58
10. Խոսակցություն նախում—Ս. Մարշալ	60
11. Ֆաշիստների ճանկերում—Թարգմ. ուսանողներից	61
12. Համարձակ տղայի պատասխանը—Թարգմ. ուսանողներից	63
13. Դժվար աշխատանք—Թարգմ. ուսանողներից	64
14. Մաքուր ոգում—Հ. Հայրապետյան	64
15. Մեր հերոսները—Հ. Հայրապետյան	65
16. Պիոներ Պետիկը—Հ. Հայրապետյան	67
17. Մարտը—Հովհ. Թումանյան	69
18. Աշոտի տնկած ծառը—«Լուսաբեր»—ից	70
19. Սերվին—Հռ. Պողոսյան	71
20. Գարուն—Հ. Հայրապետյան	72
21. Պիոներական պարտքը—Հ. Հայրապետյան	73
22. Ըպուռն ու մրջյունը—Խնկո Ապեր	75
23. Սարյակի տունը—Հովհ. Հայրապետյան	76
24. Մեր գետակը—Հ. Թումանյան	77
25. Մեղուններ—Ուշինսկի	78
26. Մուկն ու առնետը—Կոխլով	79
27. Զղջիկը—Թարգմ. ուսանողներից	80


28. Խոսող սարյակը—Լ. Տոլստոյ	81
29. Բաց նամակ մանուկներին—Հովհ. Թումանյան	84
30. Վոսկի ձկնիկը—Ա. Ս. Պուշկին	85
31. Արձագանք—«Լուսաբեր»—Ից	86
32. Անճոռնի ճուտիկը—Ուշինսկի	87
33. Գաղանանոցում—Հ. Հայրապետյան	88
34. Տարվա ամիսները—Ղ. Աղայան	89
35. Մայիսի մեկին աքոորում—Թարգմ. ուսերենից	91
36. Մայիս—Հ. Հայրապետյան	92
37. Մայիսի 1-ին—Հ. Հայրապետյան	93
38. Լեյտենանտ Լեվչենկոն—Փոխ. ուս.	95
39. Վալյան, Պոլինան և Մարինան—Փոխ. ուս.	96
40. Պատմում է «Ռոդինա» ոգանավի շտուրման Մարինան— Փոխ. ուս.	98
41. Ուլիկը—Հովհ. Թումանյան (հեքյաթ)	100
Քերականական և ուղղագրական վարժություններ	105
Հայերեն—ուսերեն բառարան	120
Նյութերի ցանկ	129




Փիլոսոֆ




Աշուն



Կոլտնտեսության բակը



Դ ա ս



ա ա ր
ս.

ա ա ր

ա ա

ա-աա

ա-րա


աաա, արա

Արա, աաա սար

ա ա ր աա, աաա սար:

Ն Ն Նրա Նրա

Նրա, աաա սար:



Է Ս

սա-րեր

սար

սարեր

Սա սար ե:

Սար ե սա:

— Արա, առա սար:

— Սար:

— Արա, առա սեր:

— Սեր:

Է սեր, սարեր:

Ա Աս սար ե:



Ճ Մ Տ

ժառ

առառ

ժառ, ա-ռառ

Սա ժառ ե, առ


առառ: Տառ, տես

առ ժառ ե, առ ա-

ռառ ե:

Տ ք Տար տար:

Ա Առ, առ Տար ե:



Է Ի Մ

մատիտ

մա-տիտ

Սա մի մատիտ է:


Արա, տես, սա մատիտ է:

Մամա, սա սար է, սա առամ, սա մատ,

սա մատիտ:

Իրա, արի մի մատիտ տամ:

ի մի մաքիւր, ի իրա մ
մամա, արի մի մաքիւր փամ:



ու ն Ն

տուն

Սա տուն է

Սա տուն է, մի սիրուն տուն:

Սա մեր տունն է:

Իրա, արի մեր տուն:

Սիրանն ու Նինան տանն են:

Նինան մի սիրուն մատիտ ունի,

արի, տես:

ու ն փուն Ն Նինա:

Նինան մի մաքիւր ունի:



2 Շ Ե

շուն

Սա շուն է:

Եմման մի շուն ունի: Մի շատ սիրուն
շուն: Շուշան, շուտ արի տես:

Եմման միշտ ասում է.

— Իմ սիրուն շուն, շուտ արի տուն:

Աշուն

Աշուն է, աշուն,

Աշուն է սիրուն:

Ղ ղուն Զ Զամամ է եմմա:
Զուշանն ու եմման մի ղուն
ունեն:



4 Կ

կատու մուկ

Մուկ ու կատու

Իրան մուկ է, Նինան կատու:

— Մուկիկ Իրա, արի, արի:

— Կատու Նինա, ղնտ, ղնտ:

Կիմիկն ու Իրան, Զամամն ու Նինան,
Սանամն ու Մասման աշակերտներ են:

Կ Կ կատու Կ Կ Կիմի
Կիմն աշակերտ է:



լուսին

Լ Լ ՈՒ

Լուսին

Սարի ուսին

Սիրուն լուսին:


Ուլիկ

Նեւին մի ուլ ուներ, սիրուն ու շեկիկ ուլ:
Նա շատ եր սիրում իր ուլիկին ու միշտ կե-
րակրում եր նրան:

Ուլիկն ուտում եր, ուտում ու մկկում:
Սիրունիկ Լենան ել ասում եր.

— Կեր, կեր, իմ սիրուն ուլիկ, շատ կեր:

Է լուսին Է լուսիկ Պե Պանան
Պանանն ու Լենան ուլ ունին:



" ՎՈՎ

Տրակտորով վարում են

Ուշ աշուն եւ Կոլեկտիվի արտերում ամեն
որ վար են անում: Տրակտորով են վարում, վոր
լավ վարեն ու շուտ ավարտեն:

Ոմարն ու Վալին, Վարսն ու Ավոն լավ
տրակտորիստներ են, շատ են վարում:

Վասոն ու Ռնիկն ել նոր են սովորում տրակ-
տորով վար անել:

ո վ որ վար

Ո վ Ռնիկն ու Վալին արակ-
տորով վար են անում:



Ը Ը

Իմ ընկեր Ոնիկը

Ընկեր Ոնիկը յերկու լավ նկար ե նկարել մեկը նվիրել ե Ոմարին, մեկը՝ Վլասին:

Ոմարը, Ոնիկը, Վաստն ու Վլասը շատ լավ են սովորում ու նկարում:

Իմ ընկերներն են

Շամոն, Կիմիկը, Լեփոնը, Մասման, Ունանը, Վանիկը, Նուռիկը, Իվանը, Տիրանը, Եմման, Սուրենը, Աննան ու Մանիկը:

ը ընկեր չ
ընկեր չենին: ընկեր Արային:



պ Գ

Պիոներ

Պիոներ Ոմարը

Ոմարը պիոներ եր:

Պապը նրան շատ եր սիրում ու միշտ ասում եր.

— Ոմար, պիոները Լենինի պատվերները պիտի կատարի, պիտի լավ սովորի, վոր որինակ Լինի իր ընկերներին:

— Կկատարեմ, սիրելի պապ, Լենինի պատվերները կկատարեմ ու միշտ լավ կսովորեմ, վոր որինակելի պիոներ Լինեմ,—ասում ե պիոներ Ոմարը:

պ պապ պիոներ Մ Մասիկ:
Մասիկն ու Մերրոսը լավ են սովորում:





բ ֆ

Քարտաշ


Պետոն ու կարոն քարտաշ են: Նրանք քար են կտրում, քար են տաշում:

Քար են տաշում, վոր լավ-լավ շենքեր շինեն:

Ոմարն ու իվանն ել վարպետ են. քարը քարի վրա շարում, շենքեր են շինում:

Իսկ Պետրոսը, Վանիկը, Լեվոնն ու կարոն քար են կրում ու տալիս վարպետներին, վոր պատերը շուտ-շուտ շարեն, շենքերը շուտ ավարտեն:

բ ֆ ֆար, ֆարսաշ ֆ ֆարսիկե
ֆարսիկեն նոր շինում ե
սարուն:



դ ղ

Մ ա դ

Աղունը մաղում են

Մենք մեր արտերը քաղել ենք, կալը կալսել ենք:

Կոլտնտեսական Սաքոն, Քարմիլեն, Նադին, Ղուկասը, Ամիրեն ու Վաղոն աղունը մաղում են, վոր տանեն աղալու:

Մեր կոլեկտիվի աղունը շատ ե ու մաքուր:

դ ղ ճաղ ղ ղ Ղուկաս
Ղուկասն ու Քարմիլեն
աղուն են մաղում:



դ Դ

Դանակ

Նաղիքի դանակը

Նաղիքը մի սուր դանակ ունի:

Նա դանակով մի սիրուն դարակ եր շինել:
Դարակի վրա դրել եր իր տետրակը, պատիկ
քանոնը, կարմիր ու դեղին մատիտները:

— Նաղիք, Նաղիք, քո դարակի նման մի
դարակ եմ շինել, արի տես, — ասում ե Դանելը:

— Շատ լավ դարակ ե, Դանել: Վաղն ասենք,
վոր Հուկասն ու Քարմիրեն ել դարակ շինեն, —
ասում ե Նաղիքը:

դ դանակ Դ Դանել:

Դանելն ու Նաղիքը դարակ են
շինել:



բ Բ

Բադ

Նաղիքն ու բադը

Իմ ընկեր Նաղիքը բադի մասին մի վոտա-
նավոր ե սովորել:

Վոր բադ ե տեսնում, ասում ե.

Բադիկ, բադիկ,

Կարմիր տոտիկ,


Իմ սիրունիկ:

Ասա տեսնեմ՝

Եդ ուր բարով,

Շորոր տալով:

բ.բ բադ Բ Բ Բարկեն
Բարկենն ու Բադիկն
ընկերներ են:



Գ Գ

Ս ա գ

Բաղն ու սագերը

Բաղիկը բախում շատ դեռ ու դեն ընկավ աւմեկ եւ տեսավ, վոր սագերի մի շարան որոր ու շորոր տալով գալիս է:

— Բարե՛վ, բարե՛վ, սիրունիկ սագեր: Ո՞ւր եք գնում որոր-շորոր:

— Գնում ենք դեպի գետակը, վոր գեր վոր-գեր գտնենք ուտենք, վոր լողանանք մեր գետակում, իրիկունը կուշտ ու մաքուր ելի գանք տուն:

գ գ սագ Գ Գ Գարեգին
Գարեգինը սագ ունի:



Հ Հ

Հ ո վ ի վ

Հովիվ Հասանը

Կոլտնտեսական Հասանը հովիվ է, կոլեկտիվի հոտն է պահում:

Հովիվ Հասանը պահապան շներ եւ ունի: Կեսորին հոտը նստում է հովին, գետի մոտ: Հասանն եւ իր ընկերների, Բագրատի ու Ղամբարի հետ, գետում լողանում է ու լողալ սովորում:

Հասանը շատ լավ հովիվ է: Նա իր հոտը շատ է սիրում:

ե հովիվ Է Հասան:
Հասանը շատ լավ հովիվ է:



թ թ

Մեր թերթը


Մեր պատի թերթի անունը «Պատանի պիոներ» է։ Սա մեր թերթի ութերորդ համարն է։

Թերթը գրում են թեկին ու թուփին։ Նկարում են Գամբարը, Թադին, Բաբան ու Հասանը։

Շատ պիոներներ գալիս են մեր թերթը տեսնելու։

Մեր դիրեկտոր ընկեր Թադին մեր պատի թերթը շատ է հավանում։

թ թերթ թ Թադի։
ընկեր Թադին մեր թերթը հավա-
նում է։



յ Յ

Գայլ

Գայլը

Ուշ աշուն էր, յերկինքն ամպոտ էր։ Յերեք որ էր գայլը ման էր գալիս, վոր մի բան գտնի ուտելու։ Յերրորդ որը յեկել ու կանգնել էր գյուղի մոտ, բլրի վրա։

— Գոնե մի հիմար եշ, կամ թե մի լղարիկ հորթ հանդիպեր։

Այդ ըոպեյին վորսորդ Յաշարը վորսի յեր գնում։ Գայլին վոր տեսավ, դիրք մտավ և մեկ ել... կրակ... Գայլը վայր ընկավ։

յ գայլ Յ Յաշար։
Գայլը վայրենի կենդանի չէ։



Ի Խ

Խաղող

Խաղողն արդեն հասել է:


Խանութները խաղողով լիքն են:

Կոլտնտեսականներն ամեն իր ավտոներով ու սայլերով խաղող են բերում: Ավտոների և սայլերի շարանը կանգ է առնում «Արարատ» տրեհատի մոտ: Հետո հերթով մտնում են բակը:

Խաղողն ընդունում է պահեստապետ Խորենը: Նա շատ ուրախ և սրախոս մարդ է:

Իս խաղող Իս Խորեն:

Խորենը խաղող ղար է սիրում:



Հ Զ

Ոդաչու Վաչիկը

Վաչիկը վորոշել էր ոդաչունների ուսումնարանը մտնել: Խեչո պապը չեր թողնում:

— Ինչո՞ւ չես թողնում, — ասում էր Վաչիկը:

— Վախենում եմ վնաս պատահի:

— Մի վախենա, պապի, վոչինչ չի պատահի: Հիմա շատ ոդաչուններ կան: Միթե չես լսել հերոս ոդաչուններ Չկալովի, Բայդուկովի, Բելյակովի, Լյապիգեվսկու, Մուրկովի, Ոսիպենկոյի, և մյուսների մասին:


Չորս տարուց հետո Վաչիկն արդեն ավարտել էր ոդաչունների ուսումնարանը:

Կարմիր բանակի տոնին շատերի հետ Վաչիկն ել ոդումն էր:

չ չորս ոդաչու Զ Չկալով:

Պիր ու գրիչ Մեչկին,

Չիր ու չամիչ Վաչիկին:



9 8

Շարքացան

Աշնանացան

Որերը վաղուց սկսել են ցրտել:
Քամին քշում ու ցրիվ է տալիս չոր խո-
տերը, կարմիր ու դեղին տերեւները:


Աշնան այս որերին կոլտնտեսականներն
արտերումն են. ցանք են անում:

Կոլտնտեսական Յաշարը, Հրայրը, Վաղինակը,
Մանյան ու Յուլակն արտերում շարքացանով
ցորեն են ցանում:

Յուրտ աշուն է, ուշ աշուն է,
Տերեւները ցիր ու ցան,
Արտ ու հանդում ցանք են անում
Տրակտոր ու շարքացան:

յ ցանկ Մ Մոլակ:

Մոլակը շարքացանով ցորեն է
ցանում:



7 9

Զանգ

Դեպի դպրոց


— Ազիզ, Զեյնալ, Յաշար, դարձնեցեք, վեր
կացեք: Հիմի ուր վոր է, զանգը կտան:— Ասում
է նրանց հայրիկ թեմուրը:

Յաշարը, Ազիզն ու Զեյնալն այս վոր լսե-
ցին, իսկույն վեր կացան:

Մայրիկը նրանց քաղցր թեյ, հաց ու պանիր,
մեղր ու կարագ տվեց:

Նրանք կերան, պալուսակները վերցրին և
վազեցին դպրոց:

յ զ ցանգ Զ Զ Զեյնալ
Զեյնալը գերապանցիկ է:



Փ Փ

Փեթակ

Այս ի՞նչ բզզոց է, ի՞նչ տզզոց...

Փեթակն է, փեթակը, մեղուների տնակը:

Այստեղ կան զանազան մեղուներ, մի քանի հազար բանվոր, մի քանի հարյուր արու և մի մայր մեղու:


Գարունը վոր գալիս է, փեթակը զարթնում է. մեղուները շարունակ ներս ու դուրս են անում:

Իսկ աշնանը մեղուները փակվում են փեթակում և մինչև գարուն դուրս չեն գալիս:

Փեթակում յուրաքանչյուր մեղու իր անելիքն ունի:

Փ փեթակ չի փանախ:

Կոյրնսրեսակսն փանախը յոր փեթակ ունի:



Զ Ձ

Զրանցք

Մինչև Խորհրդային իշխանությունը Հայաստանի շատ վայրերում դաշտերը ջրելու ջուր չկար:

Բայց այդ վատ ուրերը վաղուց են անցել:


Խորհրդային իշխանությունը շատ Զրանցքներ շինեց և մեր անջուր դաշտերին ջուր տվեց:

Հիմա Զրանցքների միջով ջուրը հոսում և հազարավոր հեկտար հողեր է ջրում:

Շատ Զրանցքներ են շինվել նաև Խորհրդային Վրաստանում, Ադրբեջանում և մյուս Խորհրդային Հանրապետություններում:

զ զրանցք Զ Զախար:

Զախարը զրում է բանգարանոցը:



ռ Ռ

Ռեալիոն

Ռադիո

Խորհրդային իշխանութիւնից առաջ մեր
յերկրում ռադիո չկար: Հիմա համարյա ամեն
մի տան մեջ ռադիո կա:


Աշխատանքից հետո կոլտնտեսականները հա-
վաքվում են կոլտնտեսութեան ակումբը և լսում
են զեկուցումներ, յերգեր՝ հայերեն, ադրբեջա-
ներեն, ռուսերեն և այլ լեզուներով:

— Կեցցե՛ք Խորհրդային իշխանութիւնը,—
ասում ե միշտ Ռասուլ պապը:—Տես ի՜նչ հնարք
ունի, յե՛...

ռ ռադիո Ռ Ռասուլ:

Ռասուլը կոլտնտեսական ակումբ

բում ռադիո յե լսում:



ժ ժ

Պատի ժամացույցը

Թիկ, թակ, թիկ, թակ... Գիշեր ու ցերեկ
պատի ժամացույցն ե խոսում, ժամանակն ե
ցույց տալիս:

— Սառա, ժամի քանի՞սն ե,—հարցնում են
փոքրիկ Զալալն ու Ժորան:

— Ի՞նչ կա փոր,— ասում ե Սառան:

— Ժողովի պետք ե գնանք: Մոպրի ժողով
ե: Ընկեր ժիրայրը պետք ե խոսի արտասահ-
մանում գտնվող մեր հեղափոխական յեղբայր-
ների և քույրերի մասին:

ժ Ժամացույց ժ Ժաննա:

Ժիրայրն ու Ժաննան ՎՊՄՊ-ի
անդամ են:



Ֆ Ֆ

Ֆուրգոն

Հանգստյան որվա առավոտյան մեր պիոնե-
րական շոկատից յես, Մուստաֆան, Ֆեդյան,
Ժաննան, Խատիջան, Ջալիլը, Լաթիֆան, Ջավադն
ու Ֆաթման ֆուրգոնով գնացինք մոտիկ գյու-
ղըն զբոսանքի:

Գյուղի դպրոցում յելույթ ունեցանք:

Լաթիֆան ու Մուստաֆան յերգեցին, Ջալիլն
ու Ջավադը պարեցին, Խատիջան վոտանավոր
արտասանեց: Հետո պատեֆոն նվագեցինք:

Շատ լավ և ուրախ ժամանակ անցկացրինք:

Կոլտնտեսականները և գյուղի աշակերտները
մեզնից շատ գոհ մնացին:

Ֆ ֆուրգոն ֆ ֆարսի:

ֆարսիյն ու ֆարսան պարե-

ֆոն ունեն:



Ճ Մ

Ծ ա ո

Ծ ա ո ա տ ու ն կ

Այս տարի գարնանը, դպրոցի բակում մենք
շատ ծառեր տնկեցինք: Բոլոր դասարանների
աշակերտները, թե փոքր, թե մեծ, թե աղջիկ
և թե տղա, մասնակցում էին ծառատունկին:


Իմ ընկերներից Ծաղիկը, Ռաշիդը, Ժենյան,
Ֆաթման, Արփիկը և Հրաժինն իրենց տան բա-
կերում նույնպես ծառեր են տնկել, իսկ Ֆլորան,
Սոֆիկն ու Ժորան ծաղիկ ել են ցանել:

Մեր դպրոցը վորոշել է մոտիկ գործարանի
բակում ծառեր տնկել և բանվորների համար
ծաղկանոց պատրաստել:

Ճ Ծաղիկ Ճ Ծարուր:

Ծաղիկն ու Ծարուրը Ծառեր են

տնկում:



Կառուչուկի գործարանը

Քաղաքից դուրս մի մեծ ու լայն տարածու-
թյան վրա շինված է Յերեվանի Սինթետիկ կա-
ռուչուկի գործարանը:

— Նայիր, Ծաղիկ, — ասաց Ծովիկը: — Շատ
ժամանակ չի անցել այն օրից, յերբ այս տա-
փարակի վրա ցորեն ու գարի եյին ցանում: Իսկ
այժմ, տեսնում ես, մեր ստախանովական բան-
վորները հսկա գործարան են կառուցել:

Ծովիկն ու Ծաղիկը, տրամվայից իջնելով,
մտան գործարանի պարտեզը: Պարտիզում դա-
նազան գույնի ծաղիկներ կային: Հանգստի ժամ
եր: Մի խումբ բանվորներ նստարանին նստած,
խոսում ու ծիծաղում եյին:

— Իսկական գործարանային քաղաք է, — աս-
աց Ծաղիկը:



ճ ճ

Ճանճ

Աներես Ճանճը

Տաճատը ճաշում էր:

— Տը՛ղղ... Հանկարծ մի ճանճ յեկավ նրա-
տեց Տաճատի ճակատին:

Տաճատը քշեց:

— Տը՛ղղ... Ճարպիկ ճանճն իջավ Տաճատի
քթին:

— Ո՛ւֆֆ, — արավ Տաճատը և քշեց:


— Տը՛ղղ... Աներես ճանճն իջավ Տաճատի
յերեսին:

— Ո՛ւֆֆ, այ աներես, ել նստելու տեղ չկա,
ինչ է: — Ասաց Տաճատը և մի փափուկ ապտակ
տվեց իր յերեսին:

Այս անգամ ճանճը սատկած գետին ընկավ:

Ե Ե ԵսնԵ Ե Ե Եսպոնիս

ԵրԵրսն Եսպր գայիս է:



Ճագար

Մի որ Տաճատը մի ճերմակ ճագար բերեց
դպրոց:

— Վորքան սիրուն է,—ասաց Գամբարը:

— Ճակատը տես, ճակատը, — ասաց Ծա-
ղիկը:

— Ճարպիկ է, ճարպիկ,—ասաց Շամամը:

— Վոտները կարճ են,—ասաց Ժորիկը:

Ճագարին դրին մի նոր վանդակում և պա-
հեցին դպրոցի բնագիտական կաբինետում: Տա-
ճատն ու իր ընկերները ճագարի համար միշտ
կեր էյին բերում՝ ճակնդեղ, գազար և այլն:

Ճուտը

Ճի՛վ, ճի՛վ, ճվճվան,


Յեկավ ճուտը ճտճտան,

Հեռացել է իր մորից,

Վախեցել է ուրուրից:

Ճվճվում է, ճվճվում,

Իր մայրիկին է կանչում:



ձ Զ

Ձմեռ

Ձմեռ է: Ձյունը ծածկել է դաշտ ու այգի,
և ար ու ձոր: Գետն ու առուն լուել են:

Ձիերը, կովերը,՝ վոչխարներն ապրում են
տաք գոմերում: Վայրի՝ կենդանիները տաք մուշ-
տակներ են հագել:

Կոլտնտեսականները՝ ձմռան՝ համար ունեն
ջվախներով ալյուր ու ձավար, կախաններով խա-
ղող, տանձ ու խնձոր, կողովներով՝ ձու:

Յերեխաները ձյունից ու ցրտից չեն վախե-
նում: Նրանք սահում են, սղդում, ձնագնդի յեն
խաղում, ձնե մարդ շինում:

չ չմեռ Զ Ձմռան համար:

Կոլտնտեսականները կախաններով

փանչ ու խնչոր ունեն:



Զմռան յերգ

Տեսեք, տեսեք
 Զյուն ե գալիս
 Փաթիլ-փաթիլ,
 Սպիտակ,
 Ծառ ու ծաղիկ,
 Փողոց ու տուն
 Վողջ առել ե
 Իրա տակ:
 Զան, ջան ձմեռ,
 Հագար բարով,
 Ի՞նչ ուրախ եսք
 Մենք այսոր.

Զնե տներ
 Յեվ ձնե մարդ
 Մենք կշինենք
 Ամեն որ:


Տպագիր փոքրատառեր

ա բ գ դ զ ե ը թ ժ ի
 լ խ ծ կ հ ճ զ ճ մ յ
 ն շ չ պ ջ ո ս վ տ ր
 ց փ ք և ո ֆ ու


Տպագիր մեծատառեր

Ա Բ Գ Դ Զ Ե Ը Թ Ժ Ի
 Լ Խ Ծ Կ Կ Զ Դ Ճ Մ Յ
 Ն Շ Չ Պ Զ Ռ Ս Վ Տ Բ
 Ց Փ Ք ՅԵՎ Ո Յ ՈՒ

Ձեռագիր փոքրատառեր



Ձեռագիր մեծատառեր



Սովորենք համբել


- 1 մեկ
- 2 յերկու
- 3 յերեք
- 4 չորս
- 5 հինգ
- 6 վեց
- 7 յոթ
- 8 ութ
- 9 իննը
- 10 տասը

- 11 տասնմեկ
- 12 տասներկու
- 13 տասներեք
- 14 տասնչորս
- 15 տասնհինգ
- 16 տասնվեց
- 17 տասնյոթ
- 18 տասնութ
- 19 տասնիննը
- 20 քսան

- 10 տասը
- 20 քսան
- 30 յերեսուն
- 40 քառասուն
- 50 հիսուն
- 60 վաթսուն
- 70 յոթանասուն
- 80 ութսուն
- 90 իննսուն
- 100 հարյուր

- 200 յերկու հարյուր
- 300 յերեք հարյուր
- 400 չորս հարյուր
- 500 հինգ հարյուր
- 600 վեց հարյուր
- 700 յոթ հարյուր
- 800 ութ հարյուր
- 900 իննը հարյուր
- 1000 հազար

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ



1. ԼԵՆԻՆԻ հետ

Իմ հայրը շոֆեր էր:

Մի անգամ նա Լենինին ավտոմոբիլով զբոսանքի
պետք է տաներ:

Հորս խնդրեցի, վոր ինձ ել տանի:

— Ձի կարելի, շուտով Լենինը գալու յե, — պատաս-
խանեց հայրս:

Քիչ հետո Լենինը դուրս յեկավ և ուզեց ավտոմո-
բիլ նստել:

Ինձ նկատեց և հարցրեց.

— Ո՞ւմ տղան ես:

— Ի՞մն ե, — պատասխանեց հայրս:

— Անունդ ի՞նչ ե:


- Պետյա:
- Դե, նստիր, Պետյա, ավտոմոբիլով ման գանք:

Ավտոմոբիլը սլացավ:
Յերբ հասանք հրապարակին, լենինն ինձ իջեցրեց
և ասաց.
— Նո՛ւ, Պետյա, վազիր տուն:
Յես վազեցի տուն ու մայրիկիս ասացի.
— Մայրիկ, յես լենինի հետ ավտոմոբիլով ման
յեկա:
Հետո այս բոլորի մասին պատմեցի ընկերներին:

Մեր լենինը սիրելի
Մսել է լավ սովորի:

ՀԱՐՑԵՐ

Մեկ օր ի՞նչ խնդրեց Պետյան իր շոֆեր հորը:
Ի՞նչ պատասխանեց հայրը:
Ի՞նչ հարցրեց լենինը:
Պետյայի հայրն ի՞նչ պատասխանեց:
Հետո լենինն ի՞նչ առաջարկեց Պետյային:
Պետյան ի՞նչ ասաց իր մորը:



2. Ընկեր ՍՏԱԼԻՆԻ պատանեկությունը

Հիշում եմ Գորու ծխական դպրոցում սովորելու
տարիները:

Իոսիֆ Զուլաշվիլին նիհար, բայց ամբակազմ տղա
յեր: Կենսուրախ ու ընկերասեր՝ նա միշտ շրջապատ-
ված էր լինում ընկերներով: Նա առանձնապես սիրում
էր իր հասակակիցների հետ զնդակ և «լախտի» խաղալ:
Իոսիֆը կարողանում էր ընտրել լավագույն խաղացող-
ներին և այդ պատճառով ել մեր խումբը միշտ տա-
նում էր խաղը:

Իոսիֆը սովորեց հիանալի նկարել, թեև այն տա-
րիներին դպրոցում մեզ նկարչություն չէյին սովորեց-
նում:

Իոսիֆը շատ գրքեր էր կարդում և կարդացածի
մասին պատմում էր մեզ:

Իոսիֆ Զուգաշվիլին աչքի յեր ընկնում իր համես-
տությամբ և լավ, զգայուն ընկեր եր: Նա չեր գոռո-
զանում, վոր մեզանից ավելի ընդունակ եր, այլ ընդհա-
կառակր, ոգնում եր մեզ նկարել աշխարհագրական
քարտեզներ, լուծել խնդիրներ, պատրաստել դասերը:

Արալինը մեզ ուրախ, յեր-
զանիկ կյանք փոխեց:

ՀԱՐՑԵՐ

Ի՞նչպես եր սովորում ընկեր Ստալինը:

Ի՞նչպես եր վերաբերվում ընկեր Ստալինը գեպի իր ըն-
կերները:

3. Ընկեր ՍՏԱԼԻՆԸ և Մամլաքյաթը


— Իմ թանկագին ընկեր պիոներներ և հոկտեմբե-
րիկներ:

Յես Տաշիկստանի մանուկներից ձեզ վողջույն եմ
բերել:

Յես յեկել եմ Մոսկվա, մեր սիրելի Ստալինի մոտ:

Յես տասներկու տարեկան եմ, սովորում եմ դպրո-
ցում:

Վորքան յերջանիկ եմ, վոր տեսա ընկեր Ստալինին,
խոսեցի նրա հետ:



Ինձ՝ բարեվերիս, ընկեր Ստալինը ժպտաց և ասաց.

— Մամլաքյաթ, ի՞նչպես ես սովորում:

Յես պատասխանեցի.

— Սովորում եմ գերազանց:

Յերբ իմացավ, վոր լավ եմ սովորում, ընկեր Ստա-
լինը նորից ժպտաց:

4. Մարիա Դեմչենկոն ընկեր ՍՏԱԼԻՆԻ մոտ

... Յերբ ծափերը դադարեցին, ընկեր Ստալինը նայեց
ինձ և ասաց.

— Դե, ընկեր Դեմչենկո, հիմա նպատիր...

Յես սկսեցի պատմել: Պատմում եյի առաջվա ժամա-
նակների մասին, թե ինչպես եյին աշխատում: Պատ-
մեցի, թե ինչպես հաջողվեց ինձ և ընկերներին հեկտա-
րից հինգ հարյուր ցեղաներ ճակնդեղ ստանալ...

Պատմում եմ ու նայում ընկեր Ստալինին: Յե՛վ
տեսնում եմ, փորձա փոշմիխոսք բաց չի թողնում. մեկ
ժպտում, մեկ ել հավանության նշան ե տալիս...

Խոսեցին նաև կոլտնտեսուհիները:

Վերջում խոսեց նաև ընկեր Ստալինը:

Նա շատ հետաքրքրական բաներ ասաց.

— Առաջ մեզ մոտ այդպիսի կանայք չկային: Յես
հիսուն ու վեց տարեկան եմ արդեն, բավականին
տղամարդ ու կին աշխատավորներ եմ տեսել, բայց
այսպիսի կանանց չեմ հանդիպել: Սրանք բոլորովին նոր
մարդիկ են:

Բաժանվելիս ընկեր Ստալինն ինձ հարցրեց.

— Սովորել ուզո՞ւմ ես, Դեմչենկո:

— Այնպես եմ ուզում, — պատասխանեցի:

Ընկեր Ստալինը շուռ յեկավ գեպի իր զինակից-
ները և ասաց.

— Ընկերներ. Դեմչենկոն սովորելու յե գնում:

Գյուղատնտես ե դառնալու:

Նա ամուր սեղմեց ձեռքս և մենք բաժանվեցինք:

Մարվա յեղանակները — չմեռ,
գարուն, ամառ, աշուն:

Զմեռվա ամիսները — դեկտեմ-
բեր, հունվար, փետրվար:



Ընկեր ՎՈՐՈՇԻՆՈՎԸ

Խորհրդային Միության մարշալ,
Պաշտպանության ժողովրդական կոմիսար

5. Անհաղթ բանակը

Կարմիր Բանակը,
Անհաղթ բանակը,
Մեր Խորհուրդների
Արթուն պահակը,
Զգաստ և անքուն
Գիշեր ու ցերեկ
Դիտում ե, հսկում,
Վոր չար թշնամին
Մոտ չգա յերեք
Խորհրդի յերկրին:

Ուռն, ուռն, մեր
Կարմիր Բանակին՝
Բանվոր, գյուղացու
Արթուն զավակին:

Պարիշի վոչ մի թիւ հողը չենք
ուզում: Բայց մեր հողն էլ, մեր
հողից վոչ մի վերջուկ վոչ վո-
ժի չենք քա:

Կեցցե անհաղթելի Կարմիր
Բանակը:

6. Հայրենասերը

Սահմանապահը լապտերը ձեռքին մոտեցավ մի
կուշ յեկած տղայի, վորը կլինեք տասը տարեկան:
— Այստեղ ի՞նչ ես անում, տղա: Մոլորվե՞լ ես:



Տղան շրթունքները շարժեց, սակայն խոսել չկա-
րողացավ:

— Ե՛, դու բոլորովին սառել ես:

Սահմանապահը զանգահարեց կայան՝ հերթապահին:

— Այստեղ մի փոքրիկ տղա յենք գտել: Սառել է
ցրտից: Յերևում է պիտներ ե, կարմիր վզկապ ունի...

Մի քանի րոպեյից հետո տղան պառկած էր հրա-
մանատարի սենյակում, բրդե տաք վերմակով փաթաթ-
ված:

Բժիշկը նրա այտերին ու ականջներին վազելին եր
քսում:

— Բոլորովին սառել է տղան,—ասաց նա հրա-
մանատարին,—ձեռքերի մի մասն էլ ցրտահար է յե-
ղել:

— Զը՛, այժմ լսվ ես զգում քեզ: Կարծես տաքացար...
Հիմա թեյ կբերեն:

Տղան բացեց աչքերը:

— Անունդ ի՞նչ ե:

— Միշա, — կամաց պատասխանեց տղան:

— Թեյ ուզում ես...

Միշան բացասաբար գլուխը շարժեց:

— Յես պետին եմ ուզում, — ասաց տղան:

— Պետին ի՞նչ ես անում:

— Հայրս ե ուղարկել:

— Պետը յես եմ, ասա: Սակայն ինչո՞ւ հայրիկդ քեզ
առանց վերարկուի յե ուղարկել, այն ել այս յեղանակին:

— Մուշտակս... վառարանի վրա չորացնում եյի,
հսկ վերցնել անհնարին եր:

— Իսկ ինչո՞ւ չեր կարելի:

— Մեզ մոտ ինչ-Վոր մարդիկ եյին յեկել: Նրանց
մոտ ուռմբեր և ատրճանակներ կային: Հայրիկս հազիվ
շշնջաց ականջիս, Վոր գամ ձեզ հայտնեմ:

Պետը լրջացավ:

— Քանի հոգի եյին նրանք, — հարցրեց նա:

Միշան լարեց հիշողությունը:

— Յոթ-ութ հոգի կլինեյին, գրսում ել կային, սա-
կայն մութն եր, չեյին նկատվում:

— Ռումբեր ունեյին:

— Այո: Ինքս տեսա: Մուշտակների տակ թաղցրել
եյին: Ատրճանակներ ունեյին:

— Իսկ նրանք հորդ չեյին ասում ուր տանել իրենց,
դեպի Վոր կողմ, — հարցրեց պետը:


— Ասացին, սակայն լավ չհասկացա: Սեմկինո ասա-
ցին, թե Սավկինո գետի ուղղությամբ:

— Տնից Վաղո՞ւց ես դուրս յեկել:

— Տասներկուսին...

Պետը նայեց ժամացույցին և արագ Վոտքի կանգնեց:
Նա հագավ շինելը, ստուգեց մաուզերը և նայելով
ժպտացող Միշային, գնաց դեպի դուռը:

— Դե, բարի գիշեր, հերոս պիոներ: Վաղը կխոսենք:



7. Շշակի յերգը

Հեռու ծայրից քաղաքի

Յերգն ե հնչում շշակի.

«Պատիկ աղջիկ, Վեր կաց, Վեր,

Վաղուց արևն ե ծագել.

Հիմի արդեն դպրոցում

Վաղուց քեզ են սպասում»:

Հեռու ծայրից քաղաքի

Յերգն ե հնչում շշակի.

«Մանուկներին եմ կանչում,

Մայրիկներին եմ կանչում,

Հայրիկներին եմ կանչում,

Աշխատանքի յեմ կանչում»:

ՀԱՐՑԵՐ

Վճռեղից Է հնչում շշակի ձայնը:

Ի՞նչ ե ասում այդ ձայնը:

8. Յերկու կոլտնտեսական

Վահանն ու Սողոմոնն աշխատում էյին միևնույն
կոլտնտեսութեան մեջ:

Վահանն ամբողջ որն աշխատում եր:

Իսկ Սողոմոնը դաշտ եր դուրս գալիս, մի կես ժամ
աշխատում, հետո նստում՝ հանգստանում:

Հաճախ ել աշխատանքի չեր գալիս:

Աշունը յեկավ:

Կոլտնտեսականներն սկսեցին հաշվել, թե ով ինչ-
քան ե աշխատել:

Սողոմոնի աշխուրդ քիչ եր:

— Ինչո՞ւ, — բարկացավ նա:

— Իսկ դու ինչպե՞ս էյիր աշխատում, քանի՞ որ ես
բացակայել, — հարցրեց Վահանը:

— Այդ քեզ չի վերաբերում:

— Մի տես, թե ինչ ե գրված քո գլխույկում:

Սողոմոնը կարդաց.

ՈՎ ԼՍՎ ՅԵՎ ՇՍՏ Ե ԱՇԽԱՏՈՒՄ, ՆԱ ՇՍՏ Ե
ՍՏԱՆՈՒՄ

ՀԱՐՑԵՐ

Ի՞նչպիսի կոլտնտեսականներ էյին Սողոմոնն ու Վահանը:
Ի՞նչ ե գրված կոլտնտեսականների անդամագրքույկում:

9. Պիտներ Պավլիկ Մորոզովը

Կանչում են նրան

«Պաշկա Կոմունիստ»:

Ի՞նչ անենք՝ փոքրիկ,

Լեզվանի յե խիստ:

Նոր ե լրացել

Տասներեք զարուն,

Կարմիր վզկապն՝ ե

Վզին փայլվում:

Քեռու գլխարկն ե

Քաշել աչքերին,

Բայց մի նայեցեք

Նրա գործերին.

Փայտ ե կոտորում

Մայրիկի համար,

Նոր ու նոր բաներ

Գիտե անհամար,

Դպրոց ե գնում,

Աշխատում աշխույժ,

Խաղում, հապաքում

Նոր յեռանդ կուժ,

Վնչ՝ մի ժամանակ

Զի լինում տխուր,

Գիրքն ու տետրակը

Պահում եմաքուր,

Սրած՝ ե պահում

Ծայրը մատիտի...

Ամեն պիտներ

Նրա պես պիտի:

Միսմանկ բառեր, ուժ, գիրք

փայլ, նա, գործ:

Չերկմանկ բառեր, լեզու,...

գարուն, կարմիր, գարուն,

մայրիկ, մայրիկ, քեռույկ:

Քաղմանկ բառեր, աշ-

խաղել, ժամանակ, պահա-

բան, արհեստանոց:

10. Խոսակցութիւնն նաւում

Աչքերն ուղղած կղզիներին
Ու հեռացող նաւակներին,
Իրար կողքի շոգենաւում
Նստել եյին նրանք՝ խոսում:


Նաւաստու նեղ շապիկ հագած
Տղան գիտեր ոռւսերեն,
Մյուս տղան՝ բաճկոն հագած
Գիտեր միայն իսպաներեն:

Տղաները, թեև խոսում՝
Չեն հասկանում իրար լեզու,
Բայց առանձին, հատ-հատ բառեր
Ծանոթ եյին յերկուսին ել.

Լենին,
Ստալին,
Իբարրուրի,
Մոսկվա,
Մադրիդ,
Կոմսոմոլ:

Թվում է թե յերկու ազգեր
Ձրույցի յեն յեկել նստել
Շոգենավի կայմի կողքին,
Կապույտ ծովի ջրի մեջքին:

Աշխարհիս բոլոր ազգութիւնների աշխա-
տավորների յերեխաները մեր յեղբայրիկներն
ու քույրիկներն են:



11. Փաշիստների ճանկերում

1

Իսպանացի Վիտորիոն հանրապետականների հետ
կռվում էր Փաշիստների դեմ: Իսկ նրա կինը, 8 տարե-
կան վորդին՝ Մարտին և 5 տարեկան աղջիկը գտնվում
էյին քաղաքում:

Շուտով այդ քաղաքը Փաշիստները վերցրին:

Քսանութ որ շարունակ Վիտորիոյի ընտանիքը
թագնվում է Փաշիստներից՝ տանիքների տակ և նկուղ-
ներում: Հաճախ հաց և ջուր չեն ունենում: Ամեն
ըրպե սպասում են, վոր Փաշիստներն իրենց կբռնեն ու
կտանջեն:

2

Մի գիշեր փոքրիկ Մարտին մոտենում է մորը, ծո-
ցից մի մեծ ատրճանակ է հանում և ասում.

— Տես, մայրիկ, յես ատրճանակ ունեմ: Այժմ կա-
բող եմ բոլոր թշնամիներին սպանել: Վազենք, գնանք,
հայրիկին գտնենք:

Մայրիկը յերկար ժամանակ չէր համաձայնում, յերեխաների կյանքը վտանգի յենթարկել չեր ուզում:

Սակայն վերջը վորդու խնդիրը կատարեց:

Նրանք փողոց դուրս յեկան: Փողոցը մութն էր ու սարսափելի:

Դեռ մի քանի քայլ չարած, մեկը ձայն տվեց.

Կանգնիր: Ո՞վ ե գալիս:

Մարտին իրեն չկորցրեց: Նա իր քույրիկի ձեռքից բռնեց, մի կողմ տարավ ու թագնվեցին փողոցի անկյունում:

Մայրիկը թագնվել չկարողացավ: Չինված ֆաշիստները մոտեցան և շրջապատեցին նրան:

Մարտին քույրիկը շատ վախեցավ ու լաց յեղավ:

— Լաց մի լինի, — ասաց Մարտին: — Գնանք հայրիկին գտնենք, հետո կգանք մայրիկի յետևից:

3

Տների ավերակներում, փողոցների անկյուններում թագնվելով, յերեխաները հասան քաղաքի ծայրը:

Մի քանի անգամ պահակները նրանց կանգնեցրին, բայց Մարտին նրանց կարողացավ խաբել:

— Մենք գնում ենք հայրիկի մոտ: Նա այս քաղաքը պաշտպանում ե թշնամիներից:

Փողոցներից մեկում յերեխաները խոտով բեռնված մի սայլ տեսան:

— Մտիր խոտի տակ, — հրամայեց Մարտին իր քույրիկին:

Յերեխաները մտան խոտի տակ և քաղաքից դուրս յեկան:

Այստեղ յերեխաները, գնդակների տարափի տակ, պետք ե անցնեյին:

Փոսերում, ձորերում, անտառներում թագնվելով, նրանք մի քանի օրից հետո հասան հանրապետական

գորամասերին: Յերեխաները գտան իրենց հայրիկին և պատմեցին ինչ վոր պատահել էր:

— Հայրիկ, — գոչեց Մարտին: — Հրացանդ տուր, վոր գնանք մայրիկին ազատենք:

ՀԱՐՑԵՐ

Մարտին հայրն ինչի համար էր կռվում:

Խնչպիսի տղա յեր Մարտին:

12. Համարձակ տղայի պատասխանը

Գերմանական դպրոցն ե մտնում վոստիկանապետը և հարցնում մի աշակերտի.

— Ի՞նչ ե անունդ, տղաս:

— Հանս, պարոն վոստիկանապետ:

— Վճիռ կուսակցու թյանն ես համակրում:

— Չգիտեմ, պարոն:

Վոստիկանապետը հարցնում ե ավելի մեծահասակ մի տղայի.

— Իսկ քո անունն ի՞նչ ե:

— Ֆրից:

— Լավ: Դու ե՞ր չգիտես:

— Վոչ, յես կոմունիստ եմ, — պատասխանում ե համարձակ տղան:

— Կոմունիստ, ի՞նչպես, ինչո՞ւ...

— Մեր ընտանիքում բոլորը կոմունիստներ են:

— Դա պատճառ չե: Իսկ յիթե ձեր ընտանիքում բոլորը գողեր ու մարդասպաններ լինեյին:

— Այն ժամանակ յես ել ֆաշիստ կլինեյի, պարոն վոստիկանապետ, — համարձակ պատասխանում ե Ֆրիցը:

13. Դժվար աշխատանք

Քեռի Թոմի ընտանիքը մեծ է, կարիքն անպակաս։
Նա ծանր աշխատանքով է վաստակում իր որվա հացը։

Քեռի Թոմը ծխնելույզ մաքրող է. նա իր տղային
փոքրիկ Ջիմին, ընտելացնում է այդ աշխատանքին։
Շատ կցանկանար նրան աշխատանքի չտանել, բայց
ստիպված էր։

Ամբողջ որը նրանք աշխատում են բարձր շենքերի
կտուրների վրա։ Նրանք յերկուսն ել սև են, ինչպես
ծխնելույզի պատերը։

Քեռի Թոմը յերկար պտրանը կապում է Ջիմի մեջ-
քին և իջեցնում նրան ծխնելույզի մեջ։ Ջիմը փոքրիկ
թաթիկներով մաքրում է ծխնելույզի պատերի մուրը։
Ծխնելույզից Ջիմը դուրս է գալիս բոլորովին սևա-
ցած։

Նա ազահաբար սկսում է շնչել մաքուր ոդը։

Աշխատանքը ծանր է, բայց Ջիմն անտրտունջ ոգ-
նում է հորը։


Բուրժուական յերկրում նրանք այսպես են հաց
վաստակում։

14. Մաքուր ոդում

Սպիտակ, փափուկ ձյուն է յեկել,
Պատել փողոց ու դաշտեր։
Յեկեք, յեկեք, ջան մանուկներ,
Խաղանք ձմռան մեր խաղեր։

Ոդը մաքուր, սառն ու պայծառ,
Յեկեք խաղանք, պաղի տանք,
Վաղուց է, վոր մենք չենք տեսել
Այսպես սիրուն յեղանակ։

Խաղ անելով մաքուր ոդում՝
Ուժ, յեռանդ ենք հավաքում,
Խորհուրդների յերկրի համար
Աշխատանքի պատրաստվում։



15. Մեր հերոսները

1

Սառնամանիք էր։ Փչում էր սառը քամին, բուքը
փռնում էր։ Չորս կողմը ձյուն ու սառույց էր։

Չորս ոդանավ թռչում էին Հյուսիսային բևեռի
վրայով։

Ահա ոդանավերը պտույտներ կատարեցին և իջան
մի մեծ, շարժվող սառցի վրա։

2

Ոդանավերը վերադարձան, թողնելով շարժվող սառ-
ցի վրա չորս խիզախ գիտնականների՝ Պապանինին,
Կրենկելին, Շիրշովին և Ֆեոդորովին։

Նրանք մնացին այնտեղ, պարզելու, թե ինչ խորու-
թյուն ունի ովկիանոսը, ինչ կենդանիներ և բույսեր
կան այդ ջրերի մեջ, ուսումնասիրելու յեղանակը։

Իսկ սառույցը շարունակ դեպի հարավ-արևմուտք
էր շարժվում։

Փչում էր սառը քամին, գիշեր ու ցերեկ բուքն էր
փռնում։ Վրա հասան խավար որերը։ Բայց հերոս
գիտնականները շարունակում էին իրենց աշխատանքը։

Ինն ամիս նրանք մնացին այդ սառցի վրա:
Իրենց իշած տեղից յերկու հազար հինգ հարյուր
կիլոմետր հեռացել էին:

3

Բայց ահա ավելի սաստիկ սկսեցին փչել քամիները,
բուքն ավելի ուժգին փոռնաց, սառույցներն իրար
դիպան, սկսեցին ջարդվել:

Այն սառույցը, վորի վրա գտնվում էին գիտնա-
կանները, նույնպես կտոր-կտոր յեղավ: Մնացին մի
փոքրիկ սառցի վրա:

Յեվ ահա մի որ քաջ ռադիստ կրենկելը խոսեց.

«Մեր սառույցը կտոր-կտոր յեղավ: Մնացել ենք
մի փոքրիկ սառցի վրա: Բայց ուտելու պաշար ունենք,
ելի կարող ենք մնալ»:

Նրա ձայնը լսեց մեր կուսակցությունը, մեր կա-
ռավարությունը, մեր սիրելի հայր Ստալինը:

— Վերցրեք չորս հերոսներին սառցի վրայից, — կար-
գադրեց առաջնորդը:

4

Մի կողմից սառցահատ «Մուրման»-ը, «Թայմիր»-ը,
մյուս կողմից սառցահատ «Յերմակ»-ը, անվեհեր ողա-
շունքով գնացին վերցնելու:

Փչում էր սառը քամին, բուքն էր փոռնում խա-
վարի մեջ, բայց գնացին:

Յեվ մի որ սառցահատները մոտեցան սառցին:

Քաջերը հանդիպեցին քաջերին:

Գիտնականները նավ նստեցին և Մոսկվա վերադար-
ձան: Մայրաքաղաքը և փող յերկիրը բուռն խանդա-
վառությամբ ընդունեցին նրանց:

5

Տասնյակ տարիներ շարունակ շատ մարդիկ ցան-
կացել են բեվեռ գնալ, բայց չեն կարողացել:

Բեվեռը խորհրդային մարդիկ տիրեցին:

Այնտեղ, հավիտենական սառույցների մեջ, աշխարհի
ամենաբարձր տեղում՝ Բեվեռում, ծածանվում է մեր
կարմիր դրոշակը:

Ահա թե ինչպիսի հերոսներ է ծնում մեր հայրե-
նիքը:

16. Պիոներ Պետիկը

1

Պիոներ Պետիկը սլաքավարի վորդի յեր:

Փարնան սկզբին մի որ, յերբ Պետիկը դպրոցից
յեկավ, ճաշեց ու դասերը սովորեց, մայրիկն ասաց.

— Պետիկ, հաց տար հայրիկիդ համար:


Քիչ հետո Պետիկը քայլում էր անտառի միջով,
յերկաթգծի կողքով:

2

Ծառերը ծաղկել էին: Փչում էր մեղմ գեփյուռը:
Փոքրիկ թռչունները թփերի մեջ ծվծվում էին:

Հայրիկի տնակը հեռու չեր. Պետիկը չորս կիլոմետր
ճանապարհ պիտի կտրեր:

Պայծառ յեղանակ էր: Բայց շուտով յերկինքը ծածկ-
վեց ամպերով, փորոտաց, կայծակի շանթեր յերևացին,
վարար անձրև թափվեց: Պետիկը մտավ մի մեծ ծառի
տակ և սպասում էր, վոր անձրևը դադարի: Բայց անձրևը
քանի գնում, վարարում էր:



3

Հանկարծ գլխացի սարից մեծ-մեծ քարեր պոկվեցին,
դղրդալով ցած գլորվեցին և ընկան յերկաթգծերի վրա:

Ճանապարհը փակվեց:

Այդ ժամանակ շոգեմեքենայի սոււրոց լավեց:

— Մարդատարն ե... ի՞նչ կլինի, ի՞նչ կլինի... Բոլորը,
բոլորը կմեռնեն,—սնցավ Պետիկի մտքով:

Անձրևն ավելի վարարեց, շոգեմեքենայի սոււրոցն
ավելի մոտիկից լավեց:

Պետիկը փողկապը հանեց, ծառից մի ճյուղ պոկեց,
փողկապը կապեց ճյուղի ծայրին, բարձր բռնեց և օկսեց
առաջ վազել, գոռալով.


— Մեքենավար, մեքենավար, ճանապարհը փակ ե...

Հենց թափված քարերի մոտ գնացքը կանգ առավ:
Ճամպորդների կյանքը փրկված եր:

ՀԱՐՑԵՐ

Ո՞վ եր պիտներ Պետիկը:

Ի՞նչ հերոսութուն արավ պիտներ Պետիկը:



ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

17. Մարտը

Ա՛խ, եսպես ել գիժ ամիս,
Մարդու հանգիստ չի տալիս:
Եսոր ուրախ որ կանի,
Վազը՝ անձրև ու քամի,
Առավոտը՝ պայծառ ող,
Կեսորը՝ մութ ու ամպոտ:
Մին հագնում ե սպիտակ,
Մին կանաչին ե տալիս,
Մի որ ցուրտ ե, մի որ տաք,
Մին խնդում ե, մին լալիս...
Ա՛խ, եսպես ել գիժ ամիս...

ՀԱՐՑԵՐ

Ինչո՞ւ յենք մարտ ամսին գիժ ասում:



18. Աշոտի տնկած ծառը

Մի անգամ զարնանն Աշոտն ու Տիգրանն ուռենու ճյուղերից իրենց համար ձեռնափայտեր կտրեցին:

Յերբ առվի ափին նստած խոսում էյին, Տիգրանն իր փայտը կտրեց ու դեն գցեց, իսկ Աշոտը տնկեց առվի ափին՝ խոնավ գետնի մեջ:

Անցավ մի քանի ամիս:

Մի որ Տիգրանը, առվի ափը՝ գալով, տեսավ, վոր Աշոտի տնկած փայտը կանաչել, ճյուղեր ե տվեր:

Շատ տարիներ անցան:

Աշոտն ու Տիգրանը մի անգամ միասին յեկան առվի ափը:

Այդտեղ Աշոտը նկատեց մի սիրուն ուռենու և ասաց.

— Նստենք այս ուռենու տակ:

— Նստենք: Յես հաճախ մենակ նստում եմ այս ուռենու տակ և քեզ հիշում, — պատասխանեց Տիգրանը:

— Ինչո՞ւ:

— Հիշում ես, վոր քո փայտը տնկեցիր՝ առվի ա-

փին: Այս ուռենին այն փայտն ե, վոր աճել ե և այսպիսի սիրուն ծառ դարձել:

ՀԱՐՑԵՐ

Աշոտն ու Տիգրանը մի որ ի՞նչ արեցին:

Տիգրանն իր փայտն ի՞նչ արավ:

Աշոտն իր փայտը վորտեղ տնկեց:

Ի՞նչ դարձավ Աշոտի փայտը:



19. Սերվին

1

Մոտիկ անցյալում, մի մեծ քաղաքում, Գարաշեն մի տան խոնավ նկուղում, իր հիվանդ մոր հետ ապրում եր Սերվին, Բոբիկ վոտներով փոքրիկ քրդուհին: Ժամանակ չունեի, վոր խաղար բախում, Պիտի աշխատեի Սերվին անդադրում,

Պիտի ծառայեր փոքրիկ քրդուհին
Վերևի հարկում ապրող հարստին:

2

Մի տարի անցավ... Այն մեծ քաղաքում,
Ուր հիվանդ մոր հետ Սերվին եր ապրում,
Նոր կյանքի կարմիր դրոշ ծածանվեց,
Նոր մարդիկ յեկան, նոր արև ծագեց:
Նա չեր վազում ել քարե սանդուխքով,
Վոր հաց վաստակեր փոքրիկ ձեռներով:
Քշեցին այն չար հարստին վերից,
Ազատվեց Սերվին կողովի բեռից:
Մայրիկն ել առողջ, ել դեղ չեր խմում,
Աշխատում եր նա մեծ գործարանում:
Դպրոց եր վազում Սերվին ամեն ուր,
Վոտներին մի նոր կոշիկ ճակատվոր,
Զնգնգան ուլունք Սերվի կրծքին,
Գանգուր մազերին արևի վոսկին:

ՀԱՐՑԵՐ

Վճր իշխանության ժամանակ եր Սերվինը հարստին ծառայում:

Վճր իշխանության ժամանակ եր Սերվինը լավ ապրում և սովորում:

20. Գարուն

Զուգվել են կրկին
Անտառ ու այգի,
Վշտում ե ուժգին
Զուրը գետակի:

Հավքերը սիրուն
Համերգ են կազմել,

Արտում ու դաշտում
Ցերգ ու հորովել:

Թիթեռներն ուրախ
Թռչում են դեռ-դեռ...
Զան, տեսքիդ մատաղ,
Գարուն ե արդեն:

Գարնան ամիսները —

Մարտ, ապրիլ, մայիս:

Գարնան առաջին ծաղիկները —
չնծաղիկ, մանուշակ:

21. Պիոներական պարտքը

1

Հանգստի ուր եր:

Պիոներներ խորենն ու Նադյան ճանապարհ ընկան
մոտիկ գյուղի կոոպերատիվն ընթերցանության գրքեր
գնելու համար:

— Յես «Վոսկի ձկնիկն» եմ գնելու, — ասում եր
Խորենը:

— Յես ել «Գիքորը», — ասում եր Նադյան:

Այսպես խոսելով գնում եյին:

Մեկ ել մի ֆուրգոն դողդալով ու ճոճալով յեկավ ու անցավ:

Ֆուրգոնի մեջ գլխին կարմիր թաշկինակ կապած
մի կին եր նստած:

Ֆուրգոնից մի կապոց վայր ընկավ:

Նադյան ինչքան կանչեց. «Մորաբույր, մորաբույր,
ֆուրգոնը կանգնեցրու», — մորաբույրը չլսեց:

Խորենը կապոցը վերցրեց: Բաց արին, տեսան, վոր
մեջը շատ փող կա:


— Ի՞նչ անենք, Նադյա, — հարցրեց Խորենը:

— Ի՞նչ պիտի անենք, — պատասխանեց Նադյան: —
Կարմիր թաշկինակ կապած մորաբույրը կգտնենք, փողերը կտանք իրեն:

Խորենը կապոցը ծոցը դրեց:
Գնացին:

2

Գյուղ հասնելով, մտան կոռպերատիվի խանութը:
Կարմիր թաշկինակ կապած մորաքույրն այնտեղ ապ-
րանք եր գնում:



Յերբ գնած ապրանքների գինը հաշվեցին և նա
մոտեցավ դրամարկղին վոր վճարի, հանկարծ գոչեց.

— Վայ... Փողիս կապոցը կորցրել եմ: Ամբողջ
տարվա աշխատանքս եր... Հիմի ի՞նչ անեմ:

— Մորաքույր, քո կապոցն ի՞նչ գույնի յեր,—
հարցրեց Խորենը:

— Սպիտակ թաշկինակ եր, բալես, սպիտակ թաշ-
կինակ,—հառաչելով պատասխանեց մորաքույրը:

Այդ ժամանակ Խորենը ծոցից հանեց թաշկինակը
և ասաց.

— Ահա քո կապոցը, մորաքույր, ճանապարհին ենք
գտել:

Մորաքույրը մին Խորենին, մին Նադյային նայեց,
ապա գրկեց, յերկուսին ել համբուրեց և ասաց.

— Կեցցե խորհրդային յերկիրը, վոր ձեզ նման յե-
րեխաներ ե անցրել:

Մորաքույրն ուզում եր նրանց վող տալ, բայց
Խորենն ու Նադյան չվերցրին:

Նրանք ասացին.

— Մենք մեր պիոներական պարտքն ենք կատարել:

ՀԱՐՑ

Ի՞նչպիսի պիոներներ էյին Խորենն ու Նադյան:

22. Ծպուռն ու մըջյունը

Թռի-վռի

Մի ճպուռ,

Վողջ ամառը

Շուռ ու մուռ

Յերգեց, ճռռաց,

Ճռռաց:

Մին ել, ըհը,

Չմեռը

Փռեց իրա

Թևերը,

Բացեց գորգը

Սպիտակ,

Դաշտերն առավ

Չյունի տակ:

Անցան պայծառ

Որերը,

Ել վո՞րն ասեմ,

Ել վորը,

Յերբ ամեն մի

Թփի տակ

Թե սեղան կար,

Թե ոթյակ:

Յեկան որեր

Յրտաշունչ.

Ծպուռն ընկավ

Լուռ ու մունջ:

Քաղցած փորին

Ել ի՞նչ յերգ,

Յուրաղ տարավ

Վոտ ու ձեռք:

Զընգը-զընգը

Իողալով,

Ծանր-ծանր

Սողալով,

Նա մըջյունին

Ասում եր.

— Գլխիդ մատաղ,

Մանամեր.

Մի ճար արա՛

Շունչ առնեմ.

Յրաից, սովից

Չմեռնեմ.

Կերակրի,

Տաքացրու,

Մինչև գարուն

Ապրեցրու:

— Ի՞նչ խաբար ե,

Սանիկս,

Զաբմանում եմ,

Զանիկս,

Չաշխատեցիր
Ամառը,
Ասա, ի՞նչ եր
Պատճառը:
— Եղպես բանի,
Սանամեր,
Ել ժամանակ
Ո՞վ ուներ.
Են խոտերում

Բուրավետ
Յերգում եյինք
Մերոնց հետ:
— Յերգում եյիր,
Շատ բարի.
Այժմ ել բունի
Վեր-վերի,
Քամին ծափ տա,
Դու պարի:

ՀԱՐՑԵՐ

Ի՞նչպես անցկացրեց ճպուռն իր որերն ամռանը:
Ի՞նչպիսի գրություն ստեղծվեց ճպուռի համար ձմռանը:

23. Սարյակի տունը

Սարյակները մեր հերվան
Ես ուր վոշ ե պիտի գան,
Բայց տնակը հնացած
Պետք չի գալու ել նրանց:

Կարեն, արի միասին
Նոր տուն շինենք սարյակին,
Թե չե տեսնի տուն չկա,
Ել մեր բակին մոտ չի գա:

Վորդ ու թրթուր զանազան,
Յես ի՞նչ գիտեմ՝ ել ինչ բան,
Ներս կմտնեն մեր այգին,
Վնաս կտան ահագին:

Դե, վեր գնա մուրճը բեր,
Յես ել՝ տախտակ ու մեխեր:


Զվող թռչուններ — սարյակ,
Ժիժեռնակ, արագիլ, կռունկ,
Կկու:

Զմեռող թռչուններ — ենեղուկ,
ագռավ, կաչաղակ:

24. Մեր գետակը

Մեր գյուղից վեր մինչ այսօր
Կա ուռենի մի սգվոր:
Մեծ անտառից նա զատված,
Մարդու կացնից ազատված՝
Կանգնած ե դեռ ու շոգին
Հով ե տալիս մշակին:
Գիժ, լեռնային մի վտակ:
Խոխոջում ե նրա տակ,
Խաղում կանաչ մարգերին:
Են առվակում կես որին,
Յերբ վոր շոգից նեղանում,
Գնում եյինք լողանում:
Տկուր, աշխույժ խմբակով,
Աղաղակով, աղմուկով
Խաղում եյինք, վաղվղում
Գույն-գույն ժանրիկ ավազում,

Կամ հետևում հերհե
Թիթեռնիկին փոսկեթե,
Ու միշտ հոգնած ժամանակ,
Նստում եյինք ծառի տակ:



25. Մեղուներ

Գարունը յեկավ: Արեւ փախցրեց դաշտերի ձյունը:
Որը տաք էր, արեւը՝ փառ:

Մեղուները փեթակից դուրս յեկան, թռան խնձորենու մոտ:

